եղբայր, փախի՛ր»: Մէկն անցաւ, եւ միւսն էլ կ'անցնէր՝ Գուրգէն նորա թեւէն բռնեց եւ արձանի մը պէս կեցուց: «Ա՛յ եղբայր, թեւս կոտրեցիր», կը գոչէր մարդը. իսկ Գուրգէն թուլցնելով, «Մա՛րդ, ինչո՞ւ կը փախչիս, պատճառն զրուցէ՛», ըսաւ:

— Պատճառն այն է, որ աւազակ քուրդերն դարանի էին եւ բազմութեամբ մեզ զարկին, իշխանը վիրաւորեցին, եւ այս ճամփով կ'ուգան, քեզ էլ, մեզ էլ եթէ չսպաննեն՝ գերի կը տանին:— Եւ դարձեալ կը ջանար փախչելու ձեռքեն:

Իսկ Գուրգէն դարձեալ ամուր սեղմելով թեւը.

— Մա՛րդ,— կ'ըսէր,— սա իշխանին անունը տուր եթէ կ'ուզես, որ քեզ թողում:

— Ա՛յ, թեւս կոտրեցիր, Մուշեղ, Մուշեղ է անունը. Անձեւացեաց իշխանն է… ահա՛ եկան անօրէնները…

Վայրկենին Գուրգէն թողուց մարդը, «Տէ՛. հիմա փախի՛ր, անպիտան մարդ», ըսաւ, եւ աչքով կշռեց ձիաւորաց խումբը, որ կ'ուգար՝ տասնութը-քսանի չափ նիզակաւոր, սոցայ կերպարանքեն եւ ըրած գործողութիւնն երէն յայտնի էր թէ մօտ գտնուած Խոյա տաճիկ ամիրայի զօրքերեն էին, որ դարանի մտած Կ'անդուար ամրոցին շուրջը՝ Մուշեղ իշխանը ձեռք անցնելով փրկանք առնուլ, ամրոցին տիրել իրենց նպատակ ունէին: Իսկ Գուրգէն վերարկուն վար առաւ, փոքրիկ վահանը ձախ ձեռք, աջով երկայն որով զինեալ. «Տէ՛, քեզ տեսնեմ, Ցոլակ», ըսաւ, եւ երասանակը սղմեց՝ ու թողուց. փոթորիկ մը եղան մարդ ու ձին, եւ իբրեւ թէ թռչելով յարձակում մ'ըրին խումբին դէմ, որ կ'ուգար: Ահագին սուրը կը շողար աջ ու ձախ, փայլատակման լոյս մ'էր, որ կը ցոլար, եւ այս ու այն կողմ մեռեալ եւ վիրաւոր կը թապլտկէին. հազիւ թէ քանի մը վայրկեան՝ ոչ ոք ոտքի վրայ շուրջը չի կար, այլ ո՛վ որ կրցեր էր փախեր էր, եւ միայն մէկ մարդ մը կար ձիու մը վրայ՝ ձեռքերը իրարու կապած եւ ոտքերը ձիուն փորին տակեն շղթայած. Մուշեղ Անձեւացուոց իշխանն էր այդ մարդը, որ զարմանթով կը նայէր եղածին: Առանց խօսք մը զրուցելու